265 Գնում էր Պետրոսը ճամփով քարքարոտ,

1. Գնում էր Պետրոսը ճամփով քարքարոտ,
Ճամփան շատ երկար էր, ճամփան էր փշոտ.
«Տե՛ր, ողորմի՛ր, ուժ տուր ոտքերիս,
Տե՛ր, ողորմի՛ր, հասնեմ իմ հոտին,
Քանզի ծարավ են մարդիկ Քո ջրին,
Տե՛ր, ինձ ողորմի՛ր, ո՛ւժ տուր ոտքերիս:

2. Հալածում են մարդիկ, չունեմ ես դադար,
Տե՛ր, քարոզում եմ Քո խոսքերը արդար,
Տե՛ր, ասացիր՝ նմանվի՛ր դու Ինձ,
Տե՛ր, ասացիր՝ խաչդ վերցրո՛ւ,
Ե՛կ Իմ հետևից, Իմ ճամփան է ճիշտ:
Տե՛ր, Դու ողորմի՛ր, ո՛ւժ տուր ոտքերիս:

3. Երկար ես քայլեցի, շատ տառապեցի,
Բայց Քո ճանապարհից ես չշեղվեցի:
Տե՛ր, տանում են ահա խաչելու,
Անարժանիս խաչին գամելու,
Թող որ ինձ խաչեն, խաչեն գլխիվայր,
Տե՛ր իմ, Քո փառքով Դու ինձ երկինք տար»: